ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին

Վանաձորի քաղաքացիական-երիտասարդական կենտրոնի
համակարգող, ՀՀ քաղաքացի Վարդուհի Անանյան

Հասցե. Հայաստան, Վանաձոր , Տերյան 4/38

Էլ. հասցե vanadzorqek@gmail.com
հեռ- 095-90-12-12

07 դեկտեմբերի, 2016թ.

Տեղեկության հարցում-1/2016

Հարգելի պարոն Նալբանդյան,

Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով՝ խնդրում եմ ինձ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. ՀՀ Լոռու մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի բոլոր այն նիստերի արձանագրությունների եւ որոշումների պատճենները, որոնք գումարվել են այդ խորհրդի ստեղծումից ի վեր:
2. Արդյո՞ք որեւէ կերպ հրապարակվել են վերոհիշյալ արձանագրությունները եւ որոշումները, եթե այո, ապա խնդրում եմ ինձ տրամադրել հրապարակման հասցեները կամ համացանցային հղումները:
3. ՀՀ Լոռու մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի կանոնադրության կամ աշխատակարգի պատճենը, եթե կա այդպիսի փաստաթուղթ:
4. ՀՀ Լոռու մարզպետին առընթեր գործող երիտասարդական խորհրդի գործող կազմը, եւ՝ անդամներից յուրաքանչյուրի ներգրավման մեխանիզմը: Եթե անդամների ներգրավման մեխանիզմը սահմանված է որեւէ իրավական ակտով, խնդրում եմ ինձ տրամադրել այդ իրավական ակտի պատճենը:

Խնդրում եմ հարցրածս տեղեկությունները տրամադրել, դրանք ուղարկելով իմ հետեւյալ էլեկտրոնային հասցեին՝ vanadzorqek@gmail.com:

Տեղեկություն հարցնող՝

Վարդուհի Անանյան ____________________

Հ.Հ. Լոռու Մարզ. գ. Վանաձոր
Տերյան 4/138.
Վանաձորի քաղաքապետարան
Երիտասարդական կենտրոն




2001
0 7 DEC 201

R
RR230885368AM

Հ.Հ. Լոռու Մարզ 2001
գ. Վանաձոր Հայքի հրապ.
Լոռու Մարզպետարան
Մարզպետ Ա. Ղազարյանին


09 DEC 2016


08 DEC 2016